ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՏՈՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/70 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Դրոշների նկարագրություն։ Արտաքին օգտագործման դրոշ՝ յուրաքանչյուրը 2.5 մ երկարությամբ և 1.25 մ լայնությամբ, դրոշները պատրաստված են արտաքին օգտագործման համար նախատեսված հողմակայուն և անձրևակայուն դրոշային ցանցային գործվածքից, խտությունը 110–160 գ/մ², ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության նկատմամբ կայուն, երկկողմանի վառ գունավոր տպագրությամբ։Տպագրությունը կիրականացվի արտաքին օգտագործման համար նախատեսված, գործվածքի նյութին համապատասխան տեխնոլոգիայով՝ ապահովելով գույների հագեցվածությունը, պատկերի հստակությունը, գունային կայունությունը և տպագրված պատկերի դիմադրությունը տեղումների ու արևային ճառագայթների ազդեցությանը։ Տպագրությունը պետք է ապահովի դրոշի երկու կողմերում ամբողջական և ընթեռնելի պատկեր։ Կրկնակի ամրացված եզրային կարերով և ամրացման կարաբիններով։Դրոշները գիշերային լուսավորությամբ են՝ ներքևից դեպի վեր ընկնող լույսի միջոցով, յուրաքանչյուր դրոշի համար առանձին լուսատուով , LED տեսակի լույսով , պաշտպանությունը անձրևի և փոշու դեմ ՝ առնվազն IP 66 , առնվազն 4000 լյումեն (Lm) հզորությամբ լուսատու, լուսատուները կտեղադրվեն այնպես,որ ապահովեն դրոշների ամբողջական լուսավորությունը։ Լուսատուների ձեռքբերումը ,տեղադրումը, միացումը և գործարկումը կիրականացվի մատակարարի կողմից։ Դրոշների տեսակները՝ 1. ՀՀ պետական եռագույն դրոշ (1 հատ) ։ Դրոշը կհամապատասխանի ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «ՀՀ դրոշի և ՀՀ զինանշանի ընդհանուր տեխնիկական պայմանները սահմանելու մասին» N 888-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված ընդհանուր տեխնիկական պայմաններին։ 2. ՀՀ Առողջապահության

	նախարարության (ԱՆ) պաշտոնական լոգոյով սպիտակ դրոշ (1 հատ)։Լոգոյի չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ։ 3. ՀՇՕՅ պաշտոնական լոգոյով սպիտակ դրոշ (1 հատ)/լոգոյի ֆայլը տրամադրվում է պատվիրատուի կողմից/։Լոգոյի չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ։ Դրոշակաձողի նկարագրություն։ Արտաքին օգտագործման համար նախատեսված դրոշակաձողերի համակարգ՝ 10 մ բարձրությամբ։ Դրոշակաձողը կոնաձև են, պատրաստված փոշեներկված մետաղից։Դրոշակաձողի ներքևի հատվածը 105 մմ իսկ վերևի հատվածը 76 մմ դիամետր խողովակ հաստ պատով։ Նախատեսված արտաքին միջավայրում շահագործման համար։ Այն հագեցած է արտաքին մալուխային մեխանիզմով՝ դրոշի բարձրացման և իջեցման համար։ Ձողի գագաթային մասը ՝ կլոր ։ Դրոշակաձողի տեղադրումը բետոնե հիմքով՝ իրականացվում է մատակարարի կողմից։ Բետոնե հիմքը կհաշվարկվի դրոշակաձողի, քամու բեռնվածության և տեղանքի հողային պայմանների հիման վրա։Դրոշակաձողերի դասավորվածությունը և բետոնե հիմքի ձևը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ։ Երաշխիքային պայմաններ. Մետաղական դրոշակաձողերի և մեխանիզմների, բետոնե հիմքի համար 24 ամիս երաշխիքային ժամկետ։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ТОНГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՆՇՕՑ-ԷԱՃԱՊՁԲ-2026/70 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	